

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԸ

**ՀԱՅ ՏԱՌԻ ԳԻՒՏԻ 1500 և ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400**-ամեայ յոբելեանը կատարուելու է առաջիկայ հոկտ. 10-ին, 11-ին և 12-ին ս. Էջմիածնում և Օշականում։ Աղբիւրը, Տարազը եւ Գրական Գեղագիտական Սալօնը մասնակցում են համազգային-համաշխարհային քաղաքակրթական այդ Մեծ Տօնին, ուղարկելով յատուկ պատգամաւորներ ս. Էջմիածին և Օշական ու Գրական Գեղագիտական Սալօնում ուրբաթ, հոկտ. 18-ին և շաբաթ հոկտ. 19-ին կատարելով հանդիսաւոր ակտ, իսկ կիրակի, հոկտ. 19-ին Խօջիվանքի գերեզմանատանը թաղուած՝ ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերները ստեղծող՝ իդէալիստ նկարիչ Ստեփաննոս Ներսիսեանի գերեզմանի վրայ՝ տեղի կունենայ Գրական Գեղագիտական Սալօնի նախաձեռնութեամբ կանգնեցնուող մահարձանի բացումը։

Հոկտ. 3-ին էլ լոյս կը տեսնի Աղբիւր-Տարազի XXIV-րդ այս տարուայ պրէմիան՝ «Համազգային Մեծ Յոբելեանը»։